

6830



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«18» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 084 - 24

Ձեռնարկողը՝

«ՎԱՆԴՈՇԻՆ» ՍՊԸ

ք.Արտաշատ, Մարքսի փող. շենք 20, բնակ. 22

Գործունեությունը՝

Արագածոտնի մարզի Կոշի բազալտի հանքավայրի
1-ին տեղամասի արդյունահանման աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

Արագածոտնի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 084 - 24

« 18 » հունիս 2024թ.

Արագածոտնի մարզի Կոշի բազալտի հանքավայրի 1-ին տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«ՎԱՆԴՈՇԻՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզի, Աշտարակ համայնք, Վերին Սասունիկ բնակավայր

Ներածական մաս. Կոշի բազալտների հանքավայրի 1-ին տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքի Վերին Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում: Մոտակա բնակավայրերն են՝ Վերին Սասունիկը՝ 1,2 կմ, Կոշը՝ 1,4 կմ, Ուջանը՝ 4,3 կմ, Ավանը՝ 1,6 կմ:

Հայցվող տարածքի հողերը հանդիսանում են համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի համար նախատեսված հողամասի ու գյուղատնտեսական նշանակության արոտավայրի հետ, որից 1.757 հա մակերեսի նպատակային նշանակությունը ընդերքօգտագործման է, իսկ 0.06 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են 01.01.1968թ-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության երկրաբանական վարչությանն առընթեր օգտակար հանածոների պաշարների տարածքային հանձնաժողովի կողմից 1968թ. փետրվարի 29-ի N 171 արձանագրությամբ:

Հայցվող ընդերքի տեղամասի կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով

1. X=4465134.1186,

Y=8427570.2519



2. X=4465188.4151,	Y =8427432.9630
3. X=4465197.3044,	Y =8427427.3532
4. X=4465284.9276,	Y =8427457.3210
5. X=4465322.0000,	Y =8427470.0000
6. X=4465295.7614,	Y =8427498.6577
7. X=4465185.9571,	Y =8427618.5858
8. X=4465162.5540,	Y =8427608.8253

Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդերկայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների ներքին լցակույտ տեղափոխումով: Հանքավայրի 1-ին տեղամասը նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանից շահագործվել է:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը – 200 մ,
- ամենամեծ լայնությունը – 138 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը – 37.0 մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 0,67 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը – 12,86 մ,
- մարվող պաշարների քանակը- 233640 մ³, տարեկան արտադրողականությունը- 15576 մ³ մարվող պաշար,
- կորզվող պաշարները կազմում են 189625 մ³, տարեկան արդյունահանվող պաշարները- 13000մ³,
- մակաբացման ապարների քանակը – 3410 մ³:

- Բացահանքի օտարման տարածքը կազմում է 1.8166հա, ծառայման ժամկետը՝ 15տարի:

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարներն են հանդիսանում մակաբացման ապարները՝ 3410 մ³ ծավալով, շահագործման առաջին տարվա ընթացքում ձևավորվող արտադրական թափոնները՝ 10400 մ³ և գոյություն ունեցող ներքին լցակույտի ապարները՝ 5350 մ³ ծավալով:

Մակաբացման ապարները կուտակվելու են գոյություն ունեցող բացահանքի հյուսիսային մասում՝ 1412 մ նիշ ունեցող հորիզոնի վրա, որտեղ օգտակար հանածոն ամբողջությամբ արդյունահանված է: Ձևավորվում է ներքին լցակույտ, որի մակերեսը կազմում է 690 մ², բարձրությունը 5 մ:

Առաջին տարվա արտադրական թափոնները կուտակվում են բացահանքի հատակին՝ 1405 և 1410 մ նիշ ունեցող հորիզոնների վրա, որոնք հետագայում տեղափոխվելու են սպառողի տրանսպորտային միջոցներով: Գոյություն ունեցող ներքին լցակույտի ապարները չեն տեղափոխվում մինչև 1410 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը: 1410մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց ներքին լցակույտի ապարները և մակաբացման ապարները փոփվելու են բացահանքի մշակված հանքաստիճանների վրա և հարթեցվում:

Կոշի բազալտների հանքավայրի 1-ին տեղամասի բացահանքի շահագործման արդյունքում առաջանալու են 8760 մ³ թափոններ, որից՝ 3410 մ³ -ը փոխար ապարներ են, իսկ 5350 մ³ – փաստացի գոյություն ունեցող ներքին լցակույտի ապարներն են, որոնք ներկայացված են՝ միասին կուտակված մակաբացման ապարներով և բազալտի ջարդոնով:

Շահագործման ընթացքում կարող են առաջանալ նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ, որոնք օգտագործվել են փորվածքների անցման աշխատանքների տեխնոլոգիական ցիկլում: Այդ թափոնները նախատեսվում է պահեստավորել հատուկ տակառներում կամ կոնտեյներներում՝ մեկուսացված հարթակների վրա:



Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է KO 829B1 /KAMAZ 65115/ մակնիշի ջրցան ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ՍՊ-ԵԼԵ-1.4 ջրի ցիստեռնով:

Լեռնային աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել բացահանքի մշակման ժամանակացույցի պլանին համապատասխան, որի համաձայն բացահանքի հանքաստիճանները մշակվում են 5 մ բարձրությամբ հանքաստիճաններով, հաջորդաբար՝ վերևից-ներքև:

Աշխատանքներն ավարտելուց հետո իրականացվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիայի են ենթարկվում նաև արդյունաբերական հրապարակը 0,03 հա: Ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերեսը կազմում է 1.59 հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացի: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 2163050 ՀՀ դրամ, որից 159000 ՀՀ դրամը նախատեսվել է կենսաբանական ռեկուլտիվացի համար:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակների չեն արձանագրվել:

Կոշի բազալտների հանքավայրի 1-ին տեղամասի տարածքն, ինչպես նաև հարակից շրջանները, ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն, պատմության և մշակույթի հուշահամալիրներ չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների արտանետման խողովակներին վրա կատալիտիկ չեզոքացուցիչ սարքերի տեղադրում, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, մերձատար ճանապարհների ջրցանում, ինչը թույլ կտա կրճատել փոշու արտանետումները,
- ներհանքային ճանապարհների բարեկարգման խճապատում մակաբացման շերտի ապարներով, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ըստ անհրաժեշտության՝ բնապահպանական միջոցառումների վերանայում, - արտադրական տարածքի կանաչապատում արագ աճող ծառատեսակներով կամ թփերով,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա,
- բացահանքի շահագործման արդյունքում առաջացող արտադրական կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, որը նախատեսվում է պարբերաբար դատարկել տարածաշրջանում գործող և նմանատիպ ծառայություններ մատուցող ընկերությունների ուժերով՝ պայմանագրային հիմունքներով,



-աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով,

-աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում Վերին Սասունիկ և Կոշ բնակավայրերում:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ բացահանքի տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,

- վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,

- աղմուկի մակարդակի մշտադիտարկումներ՝ ամսեկան մեկ անգամ հաճախականությամբ, Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով ընկերությունը նախատեսվում է տարեկան մասնահանել 400 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Վերին Սասունիկ բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման



պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:


- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ներկայացված ռեկուլտիվացիան:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՎԱՆԴՈՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Կոշի բազալտի հանքավայրի 1-ին տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:


«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝


Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝


Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝


Նովիկ Մեսրոպյան